ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ № 1
№ ՇՀՄՁԲ-7/12-4 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **11 .11.2014թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ազատյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 23.07.2014թ. կնքված № ՇՀՄՁԲ-7/12-4 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.2 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին փոփոխել Պայմանագրով Պատվիրատուի կողմից տրամադրվող երեսացուի գործվածքի՝ միավորի համար ծախսի չափը՝ այն «1.5 լայնքով 4.0 գ/մ»-ի փոխարեն սահմանելով «1.5 լայնքով 4.07 գ/մ»:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Երևան, Զ. Սարկավագի 157
ՀՀ ՖՆ աշխատակազմի	«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ
գործառնական վարչություն	Հ/Հ 24723000000170000
Հ/հ 900011117026	ՀՎՀՀ 00803554
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-	տնօրեն
ՆՏԱ դեպարտամենտի պետ	
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Ա. ԱԶԱՏՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/13–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/12» ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի արդյունքում 2014թ-ի հուլիսի 23-ին կնքված № **ՇՀԾՁԲ-7/12-4** ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2014թ. նոյեմբերի 11-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայամանգրում կատարվող փոփոխությունը պայմանավորված է միջին համաբանակային չափս-հասակային ցուցանիշի փոփոխմամբ:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին փոփոխել Պայմանագրով Պատվիրատուի կողմից տրամադրվող երեսացուի գործվածքի՝ միավորի համար ծախսի չափը՝ այն «1.5 լայնքով 4.0 գ/մ»-ի փոխարեն սահմանելով «1.5 լայնքով 4.07 գ/մ»:

Փոփոխության հիմնավորում: Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 7.2 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշման 71-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրում նման փոփոխություն կատարվում է առաջին անգամ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ՏՎ և ԳՓՁ վարչության գլխավոր մասնագետ Ռ. **Մարդոյանին**:

Հեռախոս՝ 010-29-44-99:

Էլ. փոստ՝ r.mardoyan@mil.am

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն: